ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ (X–XIII դդ.)

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի առավել զարգացած և բարեբեր տնտեսական շրջաններից էր Արցախ նահանգը, որը X–XIII դարերում հայ, մասամբ նաև օտար (արաբապարսկական, վրաց), պատմիչների կողմից հիշատակվում է առավելապես Խաչեն անվամբ[1]:

Արցախում գյուղատնտեսության զարգացման համար բնակլիմայական լավագույն պայմաններ ուներ Արցախյան (Միլ-դարաբաղյան) հարթավայրը, որտեղ գտնվում էր Տիգրանակերտ քաղաքը՝ հիմնադրված մ. թ. ա I դարում հայոց արքա Տիգրան Բ Մեծ-ի (95–55 թթ.) կողմից: Քաղաքը տարածվում էր Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջի վրա և դրան կից գոգավորությունում՝ «Արքայական աղբյուրների» (Շահբուլաղ) հարևանությամբ ու զբաղեցնում էր մոտ 70 հա տարածք[2]:

Արցախ նահանգի մասին խոսվում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ, նկարագրվում են «Աղուանից աշխարհի» բարիքները՝ առատ հացը և գինին[3]:

Միջնադարյան Արցախի այգեգործական մշակույթի մասին հակիրճ վկայություն է պարունակում XIII դ. անանուն պարսկալեզու հեղինակի «Աջաիբ ադ-դու-

---

[1] *Բ. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 31, Ա. Հակոբյան. Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ–ԺԳ դարերում.– «Հանդէս ամսօրեայ», Վիեննա–Երևան, 2010, թիւ 1–12, էջ 73–90, նույնի՝ Պատմաաշխարհագրական և վիմագրագիտական հետազոտություններ, Արցախ և Ուտիք, Վիեննա–Երևան, 2009, էջ 252–253:*

[2] *Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ա. Ժամկոչյան, Ռ. Վարդանյան, Ի. Կարապետյան, Տ. Վարդանեսովա. Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (2005–2009 թթ.).– Հնագիտական ուսումնասիրությունները Արցախում 2005–2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 7:*

[3] *Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի.– Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ., Անթիլիաս–Լիբանան, 2010, էջ 38:*

նիյա» («Աշխարհի զարմանալիքները») աշխատությունը[4]: Նկարագրելով Խաչենը՝ նշում է՝ դժվարամատչելի նահանգ է՝ վիլայեթ, լեռների ու անտառների միջև, պատկանում է Առանի երկրամասերին և բնակեցված է հայերով, որոնք ունեն հզոր ամրոց: Այնտեղի ապրանքներն են՝ հաճելի գինիները, բուրավետ խնձորները, խաղողը և քաղցր նուռը[5]:

Արցախում այգեգործության մասին մյուս վկայությունները մեզ տալիս են վիմագիր արձանագրությունները, որտեղ բազմիցս նշվում է «այգի» բառը, որը միջին դարերում նշանակում էր ոչ թե ընդհանրապես պտղատու այգի, այլ՝ խաղողուտ, խաղողի այգի և հենց խաղողի որթը՝ «Պարտէզ՝ ուր խիտ առ խիտ տնկեալ իցեն որթք խաղողոյ»[6]: Արցախի մի շարք վիմագրերում նորատունկ այգի իմաստով հանդես է գալիս նաև «մատաղիս» բառը: Այդ բնագրերից հնագույնը Խաղարի վանքից է, որտեղ կարդում ենք. «Ի: ՈԾԳ: [1204] թուիս, ես՝ տէր Յոհանէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ, եւ զգիրք, որ ի սմա, եւ արկի զՋոթացն այգին եւ զմատաղիսն բազում աշխատութեամբ»[7]: «Մատաղիս» բառի մյուս հիշատակությանը հանդիպում ենք Հին Վաղուհաս գյուղատեղում. «Թիւն :ՈԿԵ: [1216] ես՝ Սակռ, որդի Վախտանգա կանգնեցի զխաչս բարեխաւս առ ած հոգո իմո եւ ետու զԹղեկրա այգին իւր հողով և կատապանաւ...»[8]: Երրորդ հիշատակությունը գտնում ենք Խաղարի վանքի գլխավոր եկեղեցուն կից մատուռի հյուսիսային պատին, արտաքուստ՝ Դոփ Զաքարյանի թողած նշանավոր շինարարական արձանագրության մեջ. «Թիւն :ՈՀԴ: [1225] ես՝ Դոփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի և Իւանէի շինեցի զգաւիթս եկեղեցոյս և զմատուռս եւ տվի զաւետարանս եւ Յանբակուց երկիրն եւ զիմ Հակուդենայ մատաղիսն յեկեղեցիս»[9]:

«Մատաղիս» բառի բառաքննության համար առավելապես պետք է նկատի ունենալ նրա «մատաղ» արմատը, որն արտահայտում է մատղաշ, փափուկ, դեռատի, մատաղահաս իմաստները և կարող է նշանակել նաև մատղաշ, նորատունկ

---

[4] Н. Д. Миклухо-Маклай. Географическое сочинение XIII века на персидском языке.– Новый источник по исторической географии Азербайджана и Армении, т. IX. М.–Л., 1954, с. 175–196.

[5] *Նույն տեղում, էջ 204–205,* Аджаиб ад-дуниа (чудеса мира). Критический текст, пер. с персид., введение, комментарии и указатели Л. П. Смирновой. М., 1993, с. 199; А. А. Али-заде Абдул-Керим. Социально-экономическая и политическая история Азербайджана. Баку, 1956, с. 49–50.

[6] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 80:*

[7] *Ս. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 199, Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 121:*

[8] *Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 114–115:*

[9] *Նույն տեղում, էջ 127:*

շիվեր, վազեր, որթեր[10]: Ըստ Թ. Ավդալբեգյանի՝ «մատաղիս» պետք է հասկանալ նորատունկ այգի, նորք, մատնարկ իմաստով[11]: «Մատնարկ» բառը հանդիպում է XII–XIII դդ. վիմական հուշարձաններում (Հոռոմայրի վանք, 1201 թ., Սանահնի վանք, 1234 թ.) մի քանի անգամ: Ըստ Ս. Ավագյանի՝ «մատնարկ» բառը կազմված է «մատն» բառից, որը հանդես է գալիս իր երկրորդ նշանակությամբ՝ խաղողի որթ, շիվ, ճյուղ և արկ-արկանել՝ շինել, հորինել, հաստատել, կառուցել իմաստներով: Ստացվում է, որ «մատնարկ» բառը դիտվում է նոր հորինված, շինված հաստատված մատներ կամ խաղողի վազեր, շիվեր, խաղողի նորատունկ այգի, նորք իմաստներով[12]:

Արցախի վերոհիշյալ վիմագրերում «մատաղիս», այսպիսով, նշվում է նորատունկ այգի, խաղողի նորատունկ այգի իմաստներով, ընդ որում՝ խոսվում է թե՛ արդեն գոյություն ունեցող այգու և թե՛ նորատունկ այգու՝ մատաղիսի նվիրաբերման մասին:

Այգեգործության հետ կապված մյուս տերմինը «կատապան» բառն է. «Թիւն :ՈԿԵ: [1216] ես՝ Սակռ, որդի Վախտանգա...ետու զԹղեկրա այգին իւր հողով և կատապանաւ...», «Թիւն ՈՀԳ [1224] էր: Ես՝ Սակռ՝ որդի Վախտանգա, եղբայր Հասանա, շինեցի զեկեղեցիս եւ ետու... զիմ արկած այգին ի Ճաք իւր կատապանովն»[13]: Այս բառը միջին դարերում կիրառվել է երկու իմաստով, որոնցից մեկը նշանակել է կողմնակալ, կուսակալ, իսկ մյուսը՝ այգեպան և այգու պահապան: Վիմագիր աղբյուրներում այն հիշատակվում է այգեպան իմաստով, ինչպես, օրինակ, Գառնու Սունպենց կամ սբ. Աստվածածին վանքի արձանագրության մեջ, որտեղ «կատէպանի հակ» ձևով է և, ինչպես նշում է Հ. Լ. Պետրոսյանը, խոսվում է այգեպաններից գանձվող հարկի մասին[14]:

Արցախի Խաղարի վանքի արձանագրություններում նշվում են ոչ միայն վանքին վարելահողեր, այգիներ նվիրաբերելու, այլ նաև՝ ոռոգման ջուր անցկացնելու մասին. «Շնորհիւն Քրիստոսի ես Ասփե դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին...տվի զմեր խաս հողն...:Ա: բահի ջուր...»[15]: Այս վկայությունը ցուցում է, որ միջնադարյան Արցախում ևս ջրի բաշխման համակարգի դեպքում՝ որպես չափի

---

[10] Ս. Ա վ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 200–201:

[11] Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 317:

[12] Ս. Ա վ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 201–203:

[13] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 114–115, 116:

[14] Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Գառնին IX–XIV դդ., Երևան, 1988, էջ 102–104, ն ո ւ յ ն ի՝ Գառնիի մի քանի արձանագրությունները պատմահնագիտական առումով.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1982, -11, , էջ 66:

[15] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 129:

միավոր, ընդունված էր «բահ» տերմինը[16]. այն բազմիցս հանդիպում է այլ վիմագիր արձանագրություններում[17]: «Խաս» բառը այստեղ հանդես է գալիս ընտրիր, լավորակ հող իմաստով[18]:

Այս վիմագիր արձանագրությունների հաղորդած տեղեկությունները կարևորագույն նշանակություն ունեն Խաչենագետի ներքնահովտի այգեգործության ուսումնասիրման համար:

Մ. Բարխուդարյանցը, նկարագրելով Արցախի դաշտային գավառները, հիշատակում է նաև Տիգրանակերտի գավառը՝ նշելով, որ «Գավառս խիստ արդյունաբեր է և հարուստ այգիներով, պարտեզներով, ցորենի, գարու, կորեկի, ձմերուկի, սեխի, վարունգի և այլ նշանավոր մրգեղինաց բերքերով...»[19]: Թեև այս նկարագրությունը վերաբերում է XIX դարին, երբ արդեն Տիգրանակերտ քաղաքն ավերված էր և ամայացած, այնուամենայնիվ կարևոր է նրանով, որ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այս տարածքների այգեգործության և բանջարաբուծության մասին:

Իր երկրագործական գոտով Տիգրանակերտ քաղաքը գտնվում էր Արցախյան հարթավայրում, ուր զգալի տարածքներ են զբաղեցնում շագանակագույն և դարչնագույն տիպի հողերը, որոնք իրենց որակական հատկանիշներով նպաստավոր են ոչ միայն հացահատիկային կուլտուրաների, այլ նաև՝ խաղողենու, թզի, նռան, բամբակենու մշակման համար[20]: Թե՛ խորհրդային տարիներին և թե՛ այժմ էլ Խաչենագետի ներքնահովտի այս տարածքները գերազանցապես օգտագործվում են վերը նշված կուլտուրաների մշակման համար, թերևս, միայն այն տարբերությամբ, որ այժմ այստեղ բամբակ չի մշակվում և առաջնային տեղը պատկանում է հացահատիկի մշակմանը:

Արցախյան հարթավայրում տնտեսության զարգացումն անհնար էր առանց համապատասխան ջրային ռեսուրսների և ոռոգման առկայության: Այս առումով հետաքրքիր են Տիգրանակերտի շրջակայքի պեղումները, երբ 2006 թ. հայտնաբերվեց և մասամբ պեղվեց ժայռափոր ջրանցքը (նկ. 1)[21]: Այն սկիզբ է առել Խաչենագետից, քարայրային-պաշտամունքային համալիրի մակարդակից 1,5 կմ

---

[16] «Բահ» ջրի չափը որոշելիս համայնականին ջուր տալու ժամանակ վերահսկողն առվի հոսող մասում բահն իջեցնում էր ջրի մեջ: Եթե ջուրը ծածկում էր բահի երկաթյա մասը, ապա դա կազմում էր մեկ բահ ջուր, որը մոտավորապես կազմում էր 30–35 լիտր:

[17] Հ. Թորոսյան. Ջրատիրությունն ու ջրի օգտագործման կարգը Արևելյան Հայաստանում.– ԼՀԳ, 1983, -3, էջ 5–6:

[18] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, էջ 493:

[19] Մ. Բարխուդարյան. Արցախ, Երևան, 1996, էջ 18–19:

[20] С. А. Алиев. Почвы Азербайджанской ССР. Баку, 1978, с. 122–126; Ш. Г. Гасанов. Почвы приараксинской полосы и их рациональное использование. Баку, 1969, с. 15–30.

[21] Լուսանկարները՝ Հ. Պետրոսյանի և Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի:

բարձրությունից, անցել համալիրի անմիջապես ստորոտով և դուրս գալով հարթավայր՝ թեքվել դեպի Տիգրանակերտ: Ջրանցքից պահպանվել է մոտ 300 մ երկարությամբ ժայռափոր հատված, որը նաև ունի թունելային մասեր: Որոշ հատվածներ անցնում էին բնահողով: Այդ դեպքում հատակը ամրացվել է քարե փոքր բեկորներով և վրան լցվել ավազի շերտ: Ջրանցքի պատերի վրա պահպանվել են IX–XI դդ. խաչապատկերներ[22]*:*

Արցախի գետերի ջրային պաշարների ուսումնասիրության ու օգտագործման նպատակով արժեքավոր են XIX դարում և, հատկապես, խորհրդային շրջանում կատարված ուսումնասիրությունների տվյալները, որոնց գլխավոր նպատակը Խաչենագետի հովտի ու Արցախյան հարթավայրի ավելի ընդգրկուն տարածքների իրացումն էր և օգտագործումը:

Նկ. 1. Հատված ժայռափոր ջրանցքից:

Արցախյան հարթավայրի ոռոգման համար կարևորագույն դեր ուներ Խաչենագետը, որը, սկիզբ առնելով 2154 մ բարձրության վրա, հոսում էր դեպի հարթավայր՝ ձգվելով 114 կմ երկարությամբ, իսկ գետի ընդհանուր ջրահավաք տարածությունը կազմում էր 2150 կմ² տարածք[23]*: Արցախյան հարթավայրի և, մասնավորապես, Խաչենագետի հովտը անհրաժեշտ քանակությամբ ջրով ոռոգելու համար ոռոգման բոլոր առուները հանվում էին գետի ավելի բարձրադիր հատվածներից, որտեղ ջրի հոսքն ու ծավալն ավելի ուժեղ էր, քան՝ հարթավայրում*[24]*: Նույն գործոնը հաշվի էին առել նաև Տիգրանակերտի ժայռափոր ջրանցքի կառուցման ժամանակ:*

Տիգրանակերտի պեղումների ժամանակ գտնվել էին խաղողի, նռան, թզի, սալորի, ընկույզի կորիզներ: Խաղողի կորիզները, ըստ երևույթին, վերաբերում էին տեխնիկական և սեղանի տեսակներին. զգալի թիվ էր կազմում թուզը[25]*:*

---

[22] Г. Л. Петросян, Л. В. Киракосян. Раннехристианский культово-пещерный комплекс Арцахского Тигранакерта.– Пещеры как объекты истории и культуры. Воронеж, 2016, с. 169–170.

[23] *Հայկական լեռնաշխարհ հանրագիտարան, Երևան, 2006, էջ 153:*

[24] М. Зейналов. Гидрография и водное хозяйство Нагорно-Карабахской автономной области.– Известия АзФАН ССР, 1939, № 4, с. 104–105; М. Авдеев. Мильско-Карабахская степь. Баку, 1929, с. 248.

[25] *Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Ի. Կարապետյան, Ա. Գաբրիելյան, Տ. Վարդանեսովա, Ռոման Հովսեփյան. Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները.–*

Կարևոր է հիշատակել նաև «Արքայական աղբյուրներին» կից պուրակի էթնոբուսաբանական նկարագիրը: Այստեղ զգալի քանակություն են կազմում նռենին, թզենին և թթենին, որոնք Տիգրանակերտի շրջակայքում աճում են վայրի վիճակում և գերակշռում են թե՛ պուրակում և թե՛ շրջակայքում: Պարզվել է, որ պուրակում աճող թզենիներից մոտ երկու տասնյակը երկուսից երեք հարյուր տարեկան են: Արցախյան հարթավայրում բավականին տարածված է վայրի խաղողը (լատիներեն՝ Vitis vinifera)[26]: Առհասարակ, խաղողագործությամբ զբաղվում էին 300–1200 մ բարձրություն ունեցող տարածքներում, այսինքն՝ գլխավորապես հարթավայրային ու նախալեռնային գոտում[27]:

Բայլականի (Օրեն-Կալա) պեղումների ժամանակ (քաղաք, որը գտնվում է Տիգրանակերտից ոչ շատ հեռու և բնակլիմայական նույն պայմաններում) հայտնաբերվել են դեղձի, խաղողի, բալի կորիզներ, ընդ որում՝ մեծ թիվ են կազմում խաղողի կորիզները, իսկ հորերից մեկում էլ՝ ձմերուկի կորիզ[28]: Ճիշտ է, Տիգրանակերտ քաղաքի պեղումների ժամանակ դեռևս չեն հայտնաբերվել բալի, դեղձի կամ ձմերուկի կորիզներ, սակայն, գտնվելով բնակլիմայական նույն գոտում, անկասկած, պետք է, որ մշակվեին:

Տիգրանակերտի այգեգործական, տվյալ պարագայում՝ խաղողագործական մշակույթի հետ կողմնակիորեն առնչվում է քաղաքի Կենտրոնական թաղամասում բացված V–VI դդ. քրիստոնեական բազիլիկիայի շքամուտքերի խոյակները՝ այգային և խաչային պատկերագրությամբ (նկ. 2)[29]: Խոյակների դիմերեսին պատկերված են խաղողի ողկույզներ, որոնց ուղեկցում են շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչերը: Այստեղ խաչը նույնացվում էր «Քրիստոս որթի» հետ և

Նկ. 2. Խոյակ՝ այգային հորինվածքով:

Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011–2012 թթ., Ստեփանակերտ, 2015, էջ 91–93:

[26] *Նույն տեղում, էջ 58:*

[27] Армяне.– Серия «Народы и культуры», под ред. Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц. М., 2012, с. 128.

[28] А. Л. Якобсон. Археологические исследования на городище Орен-Кала. Труды азербайджанской (Орен-калинской) археологической экспедиции.– Материалы и исследования по археологии СССР, т. III, 133. М.–Л., 1965, с. 11, 13; Г. Н. Лисицина, Л. В. Прищепенко. Палеоэтноботанические находки Кавказа и Ближнего Востока. М., 1977, с. 74–75.

[29] *Հ. Պետրոսյան և ուրիշներ. Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (2005–2009 թթ.), էջ 11–12:*

դիտվում է որպես կենաց ծառ, որը կազմակերպում է ողջ տիեզերքը: Խաչն ընկալվում էր որպես սրբազան մի հնձան, որի վրա ճզմվում էր «Քրիստոս-խաղողը»[30]:

Տիգրանակերտի հնաբուսաբանական նյութի մեջ որոշակի տոկոս են կազմում նռան կորիզները: Արաբապարսկական աղբյուրների հաղորդած տվյալներից պարզ է դառնում, որ այս տարածաշրջանի խոշոր քաղաքների Բարդա (Պարտավ), Գյանջա (Գանձակ), Բայլական (Օրեն Կալա) այգեգործության մեջ խաղողից հետո առաջնային էր նռան մշակումը: Մեր օրերում էլ Արցախյան հարթավայրը և, հատկապես, Տիգրանակերտի շրջակայքն աչքի են ընկնում նռան այգիներով, որոնք զբաղեցնում են ընդարձակ տարածքներ: Առկա է նաև վայրի նուռ:

Նռան բերքի խնամքի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XIII դ. հեղինակ Աբու-լ-Ֆազլ Խուբայշ Թիֆլիսին «Արհեստների նկարագրությունը» աշխատության մեջ: Համաձայն Խուբայշ Թիֆլիսու՝ եթե նռան ծառից ստացվող պտուղները շատ դառն են, հարկավոր է ծառի արմատները թեթևակի բացել, դրանք պատել կովի թրիքով, և միայն դրանից հետո այդ ծառից նռան բերքը կլինի քաղցր ու համեղ[31]:

Նկ. 3. Ցաքատ:

Միջնադարյան Տիգրանակերտի զարգացած այգեգործական մշակույթի մասին են վկայում նաև պեղումներից գտնված հնագիտական իրերը: Դրանցից է ցաքատը (նկ. 3), որի չափերից դատելով (22,5 սմ երկարություն)՝ այն կարող էր կիրառվել բերքատու ծառերին հետևելու՝ թփեր, ճյուղեր հատելու համար, ինչպես Հանդաբերդի վանքի պեղումներից հայտնաբերված ցաքատը[32]: Գտնվել են նաև տարբեր չափերի դանակներ (նկ. 4), որոնց մի մասը՝ հատկապես կորաշեղբ դանակները, պետք է կիրառվեին այգեգործության մեջ, թեև բացառված չէ դրանց առօրյա կիրառությունը:

---

[30] *Հ. Պետրոսյան. Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական կենսատարածքի և կենսընթացի մասին.-- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա–Երևան, 2002, թիւ 1–12, էջ 417–418:*

[31] Абу-л-Фазл Хубайш Тифлиси. Описание ремесел. М., 1976, с. 124.

[32] *Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան. Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, 2009, էջ 86–87:*

Նկ. 4. Դանակ:

Տիգրանակերտ քաղաքում գինեգործության մասին է վկայում 2012 թ. Ամրացված թաղամասից ոչ հեռու գտնվող ժայռափոր հնձանի հայտնաբերումը: Այն բաղկացած էր՝ խաղողը ճզմելու ժայռափոր, բազմանկյուն հարթակ առագաստից, որտեղ միանգամից կարելի էր ճզմել մոտ կես տոննայի հասնող քաղցուն, և ժայռափոր հորից, որի տարողությունը հասնում էր 40 լիտրի (նկ. 5)[33]: Նմանատիպ ժայռափոր հնձաններ պեղվել են նաև ժամանակակից Ղրիմի տարածքում և թվագրվում են անտիկ ու վաղմիջնադարյան ժամակաշրջաններով[34]: Ե. Լալայանը, խոսելով XIX դարում Շուշիի գավառում գինու պատրաստման մասին, նշում է՝ խաղողը լցվում էր հնձանի մեջ, և հետո տղամարդիկ մերկ ոտքերով սկսում են կոխոտել այն, ինչի արդյունքում գոյացած հեղուկը հնձանից թափվում է կարասների մեջ[35]:

Նկ. 5. Ժայռափոր հնձան:

Կ. Ղաֆադարյանը տարբերակում է հնձանատուն և հնձան հասկացությունները: «Ըստ երևույթին հնձան է կոչվել բացօթյա տարածության մեջ կառուցվածը, իսկ հնձանատուն՝ հարկի տակ եղող հնձանն է կոչվել»[36],– նկատել է նա:

Կենտրոնական թաղամասից հարավ-արևելք տեղադրված դաշտում, Ստեփանակերտ–Մարտակերտ մայրուղու հարևանությամբ բացվել են վաղմիջնա-

---

[33] *Հ. Պետրոսյան և ուրիշներ. Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, էջ 88, նկ. 43:*

[34] В. Д. Блаватский. Земледелие в античных государствах Северного Причерноморья. М., 1953, с. 143–145; И. Т. Кругликова. Сельское хозяйство Боспора. М., 1975, с. 192–194.

[35] *Ե. Լալայան. Վարանդա.– «Ազգագրական հանդես», Թիֆլիս, թիվ 2, 1897, էջ 10:*

[36] *Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 89–90:*

դարյան կարասի մնացորդներ: Շատ հավանական է, որ այն տեղադրվել է կառույցներից դուրս՝ այգու մեջ և նախատեսված է եղել մթերք պահելու համար[37]:

Նկ. 6. Կարաս:

Տիգրանակերտի պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ տարբեր չափերի կարասների մնացորդներ և ամբողջական կարասներ, որոնք առաջին հերթին կիրառվում էին գինեգործության մեջ և նախատեսված էին գինին պահելու համար (նկ. 6): Ինչպես նաև գտնվել են դրոշմազարդ կարասների բեկորներ, որոնք նախատեսված էին խնջույքների ժամանակ գինին սեղանին դնելու համար և տարածված էին նաև Վրաստանում ու Ադրբեջանում՝ կազմելով XII–XIII դարերի անդրկովկասյան խեցեգործությանը բնորոշ խմբերից մեկը (նկ. 7)[38]: Դրոշմազարդ կարասներն ունեցել են ուռուցիկ, համարյա գնդաձև իրան, լայն, կարճ վիզ, պարուրաձև հավելումներով տափակ բռնակներ: Այս կարասների ամենաբնորոշ հատկանիշն էր իրանի ամենալայն մասով անցնող դրոշմազարդ հորիզոնական գոտին, որը ստացվում էր կարասի իրանին նախօրոք թողած ելնդավոր հատվածի վրա գլանաձև դրոշմիչի պտտումով: Քանի որ դրոշմիչի տրամագիծն անհամեմատ փոքր էր իրանի տրամագծից, արդյունքում վրայի պատկերը վերարտադրվում էր կրկնվելով: Կարասների իրանները դրոշմազարդվում էին դեռևս չթրծված փափուկ կավի վրա[39]: Սովորաբար պատկերված էին կենդանական և մարդկային պատկերներ. առավել տարածված մոտիվներից էին իրար դիմաց կանգնած այծապատկերները, կենդանավազքի տեսարանները: Դրանք իրարից բաժանվում էին սանդղաձև, եղևնաձև կամ երկրաչափական որևէ այլ զարդով[40]:

---

[37] *Հ. Պետրոսյան և ուրիշներ. Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, էջ 88:*

[38] Г. Л. Петросян. Средневековый пир и закавказские сосуды для подачи вина на стол.– Археология, этнология и фольклористика Кавказа. Эчмиадзин, 2003, с. 343.

[39] В. Н. Левиатов. Украшения на карасах из Старой Гянджи.– Известия АН АзССР, 1945, № 8, с. 50–51; Б. А. Шелковников. Художественная керамическая промышленность средневековой Армении.– Известия АрмФан СССР, 1942, № 3–4, с. 11–13.

[40] *Հ. Պետրոսյան. Գառնին IX–XIV դարերում, էջ 53–58, Ֆ. Բաբայան. Հայկական դրոշմանիշ գոտիով կարասների զարդաձևերը.– ԼՀԳ, 1969, № 4, էջ 60–65,* Г. Чубинов. Декоративное убранство Анийских карасов.– Христианский Восток, т. V, вып. I. Петербург, 1916, с. 22–41.

Նկ. 7. Դրոշմազարդ կարասների բեկորներ:

Տիգրանակերտի պեղումներից գտնված կարասների բեկորները լիովին համապատասխանում են այս ցուցիչներին[41]:

Անանուն պարսկալեզու հեղինակի վերը նշված «Աջաիբ ադ-դունիյա» («Աշխարհի զարմանալիքները») գիրքը Խաչենից բացի տալիս է նաև Տիգրանակերտի հետ բնակլիմայական նույն պայմաններում գտնվող Պարտավի, Բայլականի և Գյանջայի տնտեսական նկարագրությունը: Վերոհիշյալ բոլոր շրջաններում առաջին հերթին զարգացած էր այգեգործությունը: Զգալի տարածություն էին գրավում նռան, խաղողի այգիները[42]:

Արաբական աղբյուրները բավական ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Պարտավ քաղաքի ու նրա շրջակայքի երկրագործական գոտու մասին, ինչը շատ կարևոր է նաև միջնադարյան Տիգրանակերտի երկրագործական գոտու մասին պատկերացում կազմելու, այն վերականգնելու համար, քանի որ այդ քաղաքները գտնվում էի իրարից ոչ այդքան հեռու և միևնույն բնակլիմայական պայմաններում: Այսպես, X դ. արաբ նշանավոր հեղինակ ալ-Իսթախրուի «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» աշխատության մեջ կարդում ենք. «Պարտավից մեկ փարսախ պակաս հեռավորության վրա կա Անդարաբ կոչված վայրը, որը գտնվում է Քարնայի, Լասուբի և Յակթանի միջև, մեկ օրվա ճանապարհից ավելի հեռավորությամբ: Այնտեղ կան խիտ ծառաստաններ, մրգաստաններ՝ ամբողջովին լի պտուղներով: Կա նաև ընտիր կաղին, ավելի քան Սամարդանդինը, ինչպես նաև շագանակ, ավելի լավ, քան Ասորիքի շագանակը: Պարտավում կա թուզ, որ Լասուբից է բերվում և թզի այլ տեսակներից գերազանց է»[43]:

Նույնպիսի տեղեկություններ է հաղորդում նաև ալ-Յակուբին՝ միայն այն տարբերությամբ, որ ալ-Անդարաբ վայրը տեղակայում է Կերնեի, Լասուբի (Լա-

---

[41] *Այստեղ արձանագրում ենք միայն նմանատիպ կարասների հայտնաբերման փաստը և գործառույթային առանձնահատկությունները՝ չանդրադառնալով առանձին վերցված բեկորների պատկերների նկարագրությանն ու վերլուծությանը:*

[42] Н. Д. Миклухо-Маклай. *Նշվ. աշխ., էջ 201–205:*

[43] *Իսթախրի. Գիրք թագավորությունների ճանապարհների մասին.– Արաբ մատենագիրներ, Թ–Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունը Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 573:*

սուտ) և Յակտանի (Նակտան) միջև[44]: Իսկ Իբն-Հաուկալը նշում է Անդարաբ վայրի մասին, որը գտնվում է Քանզայի և Տասուբի միջև[45]: Յակուտ ալ-Համավին իր «Աշխարհագրական բառգիրք» երկում, վկայակոչելով Իստախրուի «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» աշխատությունը, հաղորդում է միևնույն տեղեկությունները՝ ավելացնելով՝ Լասուբը[46] Առանի երկրում քաղաք է, որը գտնվում է Պարտավի մոտ[47]:

Այսպիսով, համաձայն վերոհիշյալ արաբ հեղինակների՝ Պարտավից մոտ մեկ փարսախ հեռավորության վրա[48]՝ Կուրրախի[49], Լասուբի և Նաֆթանի[50] միջև գտնվում էր Անդարաբ կոչվող վայրը[51], որտեղ կային մեծ քանակությամբ այգիներ, պտղատու ծառեր, իսկ Պարտավում վաճառվում էր թզի մի տեսակ, որը բերում էին Լասուբից և համարվում էր լավագույնը[52]: Ըստ երևույթին, ժամանակին Միլ-Ղարաբաղյան հարթավայրի այն հատվածը, որը գտնվում էր Պարտավ քաղաքի շրջակայքում հայտնի էր իր թզով, հատկապես՝ Լասուբ (Լասուր, Տասուբ) բնակավայրը (գտնվելու վայրը ստույգ հայտնի չէ):

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան արաբ հեղինակները բավական մանրամասնորեն նկարագրել են Պարտավ (Բարդա) քաղաքի երկրագործական գոտին և, հատկապես, նրա այգիները: Հիշատակված տեղանունների հիման վրա ստույգ դժվար է փաստել, թե ինչպիսի սահմաններ ուներ այս գոտին կամ դեպի ուր էր այն ձգվում, կամ կոնկրետ որ բնակավայրերի հետ էր այն կապված: Սակայն այս վկայությունների կարևորությունն այն է՝ ունենք Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող միջնադարյան քաղաքի երկրագործական գոտու համաժամանակյա նկարագրություն, որի միջոցով կարելի է փորձել վերականգնել կամ փորձել

---

[44] Ա լ - կ ու բ ի յ. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане.– Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, вып. 32. Тифлис, 1903, с. 7.

[45] *Նույն տեղում, էջ 628:*

[46] *«Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարանում» Լասուբը ենթադրաբար տեղադրվում է Ադդամ քաղաքի մոտ (տե՛ս Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Մ տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 563):*

[47] *Յ ա կ ո ւ տ ալ-Հ ա մ ա վ ի. Աշխարհագրական բառգիրք.– Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 106, 196:*

[48] *Պարսկական փարսախը հավասար է 5752.8 մետրի:*

[49] *Այս վայրի հստակ տեղադրության մասին տեղեկություններ չկան:*

[50] *Այս վայրի հստակ տեղադրության մասին տեղեկություններ չկան:*

[51] *Իրանական երկրներում հաճախ հանդիպող տեղանուն, որը նշանակում է «ջրերի միջև», «միջագետք» (տե՛ս Կ ո ւ դ ա մ ա ի բ ն Ջ ա ա ֆ ա ր. Հարկամատյան և արվեստ քարտուղարության.– Արաբ մատենագիրներ, Թ–Ժ դարեր, ծանոթագրություններ, էջ 565):*

[52] Ա. Ա. Ա լ ի - զ ա դ ե. Некоторые сведения о природных богатствах и занятиях оседлого населения Азербайджана в XIII–XIV вв.– Известия АН АзССР, 1952, № 7, с. 63.

պատկերացում կազմել Տիգրանակերտի այգեգործական գոտու մասին: Դատելով պեղումներից գտնված հնաբուսաբանական նյութը՝ կարելի է ենթադրել, որ Տիգրանակերտի երկրագործական գոտին[53] տարածվում էր Խաչենագետի, դրանից սկսվող ջրանցքի և հարակից տարածքների շուրջ: Որպես այգիների գտնվելու կռվան կարող են լինել Կենտրոնական թաղամասից հարավ-արևելք տեղադրված դաշտում՝ Ստեփանակերտ–Մարտակերտ մայրուղու հարևանությամբ բացված վաղմիջնադարյան կարասի մնացորդները: Շատ հավանական է, որ այն տեղադրվել է կառույցներից դուրս՝ հենց այգու մեջ և նախատեսված է եղել մթերք պահելու համար[54]: Մեկ այլ կարաս էլ գտնվել է «Արքայական աղբյուրներից» մոտ 150 մ հյուսիս: Իր ձևով և հարդարանքով կարասը պատկանում էր IX–X դարերին[55]: Քանի որ պեղման հատվածում կառույցի որևէ հետք չի հայտնաբերվել, հավանական է, որ կարասը հորված է եղել շինություններից դուրս և օգտագործվել է հեղուկ կամ սորուն մթերքներ պահելու համար:

Այսպիսով, միջնադարյան Տիգրանակերտի տնտեսության մեջ իր կարևոր տեղն ուներ այգեգործությունը, որը, ըստ երևույթին, դատելով ներկայումս առկա հնաբուսաբանական գտածոների տոկոսային հարաբերակցությունից, հացահատիկային մշակությունից հետո գրավում էր երկրորդ տեղը: Քաղաքում այգեգործության մասին են վկայում նաև հնագիտական իրերը՝ ցաքատը, տարբեր չափերի դանակները, բազմաթիվ կարասների ու դրանց բեկորների, հատկապես, կարևոր է, ժայռափոր հնձանի հայտնաբերումը:

ЗАМЕТКИ О САДОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЕ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА (X–XIII вв.)

РУБЕН ОВСЕПЯН

Резюме

Арцахский Тигранакерт – это город, основанный армянским царем Тиграном Великим (95–55 гг. до н. э.) и названый в его честь. Город находится в Аскеранском районе Нагорно-Карабахской Республики, в нижнем течении реки Хаченагет, на одной из сравнительно низких возвышенностей склона Ванкасарской горы и на впадине близ этого склона. В

---

[53] *Այժմ դժվար է ստույգ ասել, թե տարածքային առումով տոկոսային ինչ հարաբերակցության մեջ էին այգիների և վարելահողերի զբաղեցրած տարածությունները:*

[54] *Հ. Պետրոսյան և ուրիշներ. Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, էջ 88:*

[55] *Պեղման հատվածում շերտագրական պատկեր չի բացվել:*

экономике средневекового Тигранакерта очень важную роль играло садоводство, которое, по всей вероятности, занимало второе место после обработки зерновых. О развитии в средневековом Тигранакерте садоводства свидетельствуют многочисленные археологические находки из раскопок центрального квартала города. К ним относятся косточки разных фруктов, секач, ножи разного размера, карасы–целые и в виде многочисленных фрагментов. Благодаря археологическим раскопкам можно восстановить приблизительное местонахождение виноградников в городе. Для изучения садоводства средневекового Тигранакерта важно использование не только эпиграфических надписей Арцаха, но и письменных данных армянских и арабо-персидских историков.

NOTES ON THE GARDENING CULTURE OF TIGRANAKERT IN ARTSAKH (the 10th – the 13th centuries)

RUBEN HOVSEPYAN

Summary

The city of Tigranakert in Artsakh was founded by Tigran the Great, King of Armenia (95–55 B. C.) and was named in his honour. The city is located in the Askeran region of Nagorno-Karabakh Republic on the lower current of the Khachenaget river on one of the comparatively low heights of the slopes of Vankasar mountain and in the depression near. Gardening played an important role in the economy of medieval Tigranakert. Most probably, it was the second most popular activity after the cultivation of wheat. A number of archaeological findings from the central district of the town show how gardening developed in medieval Tigranakert. Such findings include fruit stones, cleaver, scissors of different sizes, karases –undamaged and with numerous fragments. Due to archaeological excavations it is possible to restore the estimated location of the Tigranakert vineyards. For the study of gardening in medieval Tigranakert one needs to use not only epigraphic writings of Artsakh, but also written works of Armenian and Arabic-Persian historians.